




ԵՂԵՌՆԸ ԵՎ ՀԱՂԹԱՆԱԿԸ ԵՐԳԵՐԻ ՄԵՋ

ՎԱՀԱՆ ԹԵՔԵՑԱՆ

ԱՀԱՎՈՐ ԲԱՆ ՄԸ ԱՅՆՏԵՂ...

Ահավոր բան մը այնտեղ կկատարվի մու-
թին մեջ...
Դժոխային դրաման այս ինչպե՞ս կրնա
պատմելի...
Ազգ մը ամբողջ, խորհեցե՛ք, երեկ կապ-
րեր, կոգորեր,
Միտքը լույսին կբանար և տակալ սիրտն
ալ լույսին,
Կբարձրանար ճահիճեն, ուր խրած էր ա-
տենոք,
Թներն արդեն կթողվեր, ինքզինք արդեն
երթին,
Ամպերուն մեջ կկարծեր... և ահա ճիշտ
այդ պահուն
Ոսոխ աստված մը անշուշտ, որ դարանած
կդիտեր,
Անոր վրա արձակեց ամբողջ չարիքն աշ-
խարհի,
Ոտքի հանեց բովանդակ հրեշտությունը ի
քուն՝
Մեծ օձերու, վագրերու, շաքայներու դեմ-

քերով,
Փաթեվեցավ ոտքերուն, խածատեց կուրծ-
քն ու հասավ
Անոր վզին, աչքերուն և իր ժանիքը մխեց,
Ծիշտ ուղեղին մեջ անոր, զոր արյունին
հետ ահա
Ան կըլըգե հեշտագին, ան կծծե՛ զգըլ-
խած...

Ահավոր բան մը այնտեղ կկատարվի մու-
թին մեջ.
Կսպանեն ազգ մը այնտեղ, որ կյանք ու-
նեք և շնորհ,
Ուներ հանճարն ապրելու, մորոգելու ալ
ինքզինք,
Գեղեցկացած էր տակալ ու թարմացած,
ա՛հ, որքան,
Եվ այդ ազգը մերինն էր, և կսպանեն զայն
հիմա,
Ջայն կսպանեն... Օգնությո՛ւն, ա՛հ, օգնու-
թյո՛ւն, օգնությո՛ւն...

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ

ՂՈՂԱՆՋ ԵՂԵՌՆԱԿԱՆ

(Հատված «Անլուելի զանգակատուն»
պոեմից)

Խանգարե՛լ: Ինչի՞ համար...

Գարուն էր: Չեկած ամառ՝
Փող եկավ երկնակամար,
Ջյուն մաղեց մեր բաց գլխին,
Ջյուն մաղեց՝ կրակի՞ պես...

— Գարուն ա, ձուն ա արել...
Գետերը մեր երեքման

Հոսեցին՝ երակի՞ պես...

— Արունը ջուր ա դառել...

Ջորերը շիրիմ դարձան,
Վիհերը՝ գերեզմանոց.

— Ջուրը մեր տունն ա տարել...

Ամեն քար՝ լոտ մահարձան,
Ամեն տուն՝ վառման հնոց.